

համար՝ ազգականք ու բարեկամք կը հաւաքուէին անոր տունը, հոն իսկ «ի տունս իւրեանց», կ'ըսէ, սովորութիւն էր «նաց սոյ բեկանել»։ Եւ ապա կը տանէին թաղել մեռեալը։ Այդ ճաշն հանդիսական լինելու է, որով թշնամեաց երկիւղէն կը հարկադրէին երբեմն զանց ընել (Ղեւ. 152)։ Արդարեւ Միս. Գոշ ալ կը յիշատակէ զայս իւր առակաց մէջ. ազոաւին որդին մեռնելուն, կ'ըսէ, շատերն եկան «յոզը նորա, եւ նա ասչ մեծ յօրինեաց սգաւորաց» (110-1), որ յայտնի է՝ թէ նոյն է Ղեւոնդի աւանդածին հետ։ Եւ որովհետեւ անպատեհը սովորական խրնճոյից մէջ՝ անպատշաճագոյն պիտի լինէր այսպիսի հոգեւոր սեղանի մը վրայ, մեր Հարք ուզեցին արգելուլ զինարբութիւնն այս առթիւ։ Վաղարշապատու ժողովին կանոնները կը գրեն. «Մի՛ թոյլ տացեն քահանայք գիւտրբոս առնել ի սուգս մեռելոց» (ՎՊԶ. ԻՍ). եւ Ս. Սահակայ կանոնք՝ թէ «Գինըմպեկիս ի լալիս մի՛ արասցեն» (98)։ Այս դատապարտուած զինարբուքն անտարակոյս մեզ ծանօթ զեղխութիւնքն են անուամբ եւ իրօք (աստ, 195)։ Եւ ահա կը կատարուին նոյն իսկ «ի սուգս» կամ «ի լալիս»։ այս ինքն մահուան օրն իսկ, եւ մեռելոյն դիակին մօտ։